ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 33-Ա

«11» նոյեմբեր 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Նախարար Ա. Հարությունյան

6/11/2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի մայիսի ___-ի N ____-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակութի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործունեության նպատակները, խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, գործունեության կազմակերպումը, ղեկավարումը և համակարգումը:
2. Վարչությունը Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է: Վարչությունն անմիջականորեն հաշվետու է Նախարարին: Վարչության աշխատանքները համակարգում է Նախարարի համապատասխան տեղակալը:
3. Վարչությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, նախարարության կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
4. Վարչությունը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:
6. Վարչության անվանումն է՝ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչություն:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն են՝
   1) երիտասարդական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.
   2) երիտասարդության ներուժի իրացման և զարգացման, երիտասարդների լիարժեք ինքնադրսևորման, կայացման, երիտասարդական մասնակցության խթանման համար պայմանների ստեղծումը.
   3) լրացուցիչ և շարունակական կրթության, այդ թվում՝ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը:

8. Վարչության խնդիրներն են՝
   1) երկրի հանրային կյանքին, այդ թվում՝ հասարակական, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության աստիճանի բարձրացումը,
   2) երիտասարդական նախաձեռնություններին պետական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը,
   3) երիտասարդության ոլորտում միջազգային երկկողմ և բազմակողմ ձևաչափերով, ինչպես նաև համահայկական մակարդակով համագործակցության ապահովումը,
   4) երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների միջմարզային և միջհամայնքային հորիզոնական համագործակցության զարգացման խթանումը,
   5) երիտասարդների զբաղվածության, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, աշխատաշուկայում երիտասարդների ներուժի ներգրավմանն ուղղված աշխատանքների (այդ թվում՝ սոցիալական ձեռներեցության խրախուսման) համակարգումը,
   6) երիտասարդական քաղաքականության բնագավառը կարգավորող և սահմանող պետական կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական փաստաթղթերի և իրավակարգավորումների նախաձեռնումն ու ապահովումը,
   7) երիտասարդական քաղաքականության, ինչպես նաև լրացուցիչ և շարունակական կրթության ջատագովության ապահովումը.
   8) Լրացուցիչ և շարունակական կրթության զարգացման, պետական ծրագրերի մշակման, միջազգային փորձի մոտարկման և տեղայնացման, մոնիթորինգի և գնահատման աշխատանքների իրականացման ապահովում.
   9) Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացման ապահովում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Վարչությունը չունի կառուցվածքային ստորաբաժանումներ և բաղկացած է վարչության պետից և մասնագետներից:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝
   1) մշակում է օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
   2) իր իրավասության սահմաններում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը.
   3) մշակում և կիրառում է արդյունավետ մեխանիզմներ՝ երիտասարդների ներուժի իրացման և զարգացման համար.
   4) իրականացնում է երիտասարդների մասնակցային գործընթացների խթանմանը, հոգևոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ.
   5) իրականացնում է երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտների ջատագովություն.
   6) օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ինչպես նաև միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակմանը, ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը երիտասարդության, լրացուցիչ և շարունակական կրթության բնագավառներում.
   7) միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման նպատակով աջակցում է երիտասարդական խմբերի և անհատ երիտասարդների մասնակցությանը օտարերկրյա պետություններում տեղի ունեցող միջազգային միջոցառումներին.
   8) համագործակցում և մասնակցում է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին.
   9) մշակում է համահայկական երիտասարդական բնույթի ծրագրեր.
   10) աջակցում է երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը.
   11) վերլուծում է իր իրավասության ոլորտներին առնչվող ծառայությունների շուկաները, կազմակերպում իրավիճակային տվյալների ամփոփումը.
   12) մշակում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրեր.

13) քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը.
14) մասնակցում է լրացուցիչ և շարունակական կրթության պետական քաղաքականության մշակման և դրա իրականացման աշխատանքներին, ինչպես նաև մշակում է քաղաքականության ռազմավարությունը, հայեցակարգերն ու նպատակային ծրագրերը և իրականացնում դրանց մոնիթորինգ.
15) իրականացում է մոնիթորինգ երիտասարդական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ.
16) կազմակերպում և համակարգում է մասնագիտական կրթության համակարգում լրացուցիչ և շարունակական կրթության ներդրման աշխատանքները.
17) մասնակցում է կրթության զարգացման պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին.
18) մասնակցում է նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովման աշխատանքներին.
19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

11. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության հաստիքացուցակով նախատեսված կազմով:
12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում, ղեկավարում և համակարգում է Վարչության պետը, որն անմիջական հաշվետու է նախարարին, համակարգող նախարարի տեղակալին:
13. Վարչության պետի և Վարչության աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: